ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ
ԱՆՆԱ ՋԱՎԱԽՅԱՆԻՆ,
ԷՌՆԵՍՏ ԱՎԱՆԵՍՈՎԻՆ,
ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ,
ՍԱԹԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ,
ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ,
ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ,
ԱՐՈՒՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ,
ԼԵՎՈՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.05.2019թ. հ.01/247 գրության՝ տեղեկացվում է.

«Երևանի հ.92 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հզորությունը նախատեսված է 12 խմբի համար: Ներկայումս գործում է 9 խումբ, որից 6-ում իրականացվում է ներառական կրթություն, 3-ում՝ նախաներառական, իսկ երեք ազատ խմբասենյակներն անբարեկարգ են:

2018-2019 ուստարում մանկապարտեզն ավարտում է 66 երեխա: Այժմ հերթագրված են տարիքային տարբեր խմբերի 40 երեխաներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին հաստատություն են դիմել կրտսեր նախադպրոցական և ավագ նախադպրոցական տարիքային խմբերի երեխաների շատ ծնողներ՝ մանկապարտեզի նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայով սահմանվել է նշյալ տարիքային խմբերի գործունեության կազմակերպումը՝ չներառելով վաղ տարիքային խմբի ձևավորում:

Ինչ վերաբերվում է ազատ խմբասենյակներին, ապա տեղեկացվում է, որ դրանց բարեկարգման աշխատանքները կընդգրկվեն Երևանի քաղաքապետարանի հաջորդ տարիների շինարարական ծրագրերում՝ ելնելով անհրաժեշտությունից:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևանի ենթակայության մանկապարտեզներում առկա վերանորոգման տարածքների վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կտեղեկացվի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ